Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի պատասխաններ

11-րդ դասարան

1.Հայ գրականության «Հիվանդ, հանճարեղ պատանին» գրականություն մտավ շոնդալից, նրա հայտնությունը նման էր իր իսկ երգած Արևին, որ շողաց ու լուսավորեց մի աշխարհ՝ այն իրավամբ կոչելով մեծարենցյան։ Նա ապրեց ու ապրում է ոչ թե սովորական տարիների քանակով(ընդամենը՝22), այլ իր երգած գիշերների կախարդանքով, իր աքասիաներու հոտևան ծաղիկով, իր անանձնական սիրով, որ մնայուն են, ինչպես բնության երևույթները՝ արևը, լուսինը, ծաղիկը, դաշտերն ու լեռները։ Վաղամեռիկ հանճարի ստեղծագործության մեջ առանձնակի շքեղությամբ առանձնանում է գիշերերգությունը։ Գիշերը դառնում է նրա հոգու թարգմանը, նրա զրուցակիցն ու սիրուհին, նրա անբեկանելի հավատը, նվիրումը։«Ո՛վ սուրբ գիշեր, հոսեցուր սրտիս մեջ կաթը քու սպիտակ խորհուրդիդ եւ զիս քու անբիծ գորովանքիդ յաւիտենութեանը մեջ ապրեցուր, քու հրայրքիդ բոցավառ ծիածանը շողացուր հոգւոյս խաւարին մէջ եւ էութեանս պարապը քու յոյզերովդ, քու սուրբ ու կենսառատ յոյզերովդ լեցուր»; Մեծարենցը իր քնարերգության մեջ հաճախակի է օգտագործել **գիշեր** բառը իր հոմանիշներոնվ՝ 82 անգամ. հոմանիշները՝ ցայգ, ցայգամուտ, ցայգանվագ և այլն։ «Ծիածան» ժողովածուն Մեծարենցը բնորոշել է որպես «**Սպասման երկարաձիգ գիշեր մը».** այդ տանջալից ու երկարաձիգ գիշերների մեջ են ծնվել մեծարենցյան հրաշք քերթվածները՝ **Սիրերգ, Զմրան պարզ գիշեր։** Առաջինը մի ցնցող դրամա է . շուրջը ամեն ինչ գեղեցիկ է, գիշերային լուսե պատկերները պարուրում են բանաստեղծի հոգին, տանում նրան լուսեղեն հեռուներ, արբեցնում լույսի գինով և տալիս հրաշալի տրամադրություն, բայց գիշերը մոտենում է իր հանգրվանին, իսկ բանաստեղծը չի գտնում լույսի ճամփան, այն հետզհետե անէանում է՝թողնելով տառապող հոգուն իր ցավի հետ։ Երկրորդը գիշերային պատկերների ու տեսիլքների մի ամբողջություն է, երբ երազները մոտենում են իրականությանը, սպասումը դառնում է քաղցր ու տաժանագին. գիշերվա մեջ ծավալվում է վիշտը՝ դառնալով յուրօրինակ ինքնահանգստացում ու մխիթարություն.

Պարզ, լուսածածան, հրաշալի գիշեր,
Հոսե սրտիս մեջ դիւթանքիդ ալիք…

Այդ պատճառով էլ **Ան իմ սի՛րտս է** բանաստեղծության մեջ նա բացականչում է՝

Ա՜հ, սի՛րտս է ան, սի՛րտըս, գիշերը մըթին,
Ուր կը դողայ անյուսութեան հովն ուժգին…

Մեծարենցի գիշերերգության մեջ հրաշալի է արտահայտված անհատի դրաման, ապրելու տենչը, կարոտի մեղեդին..

Շրջասույթներ՝ լույսերու նավորդ, արևի հիվանդ, հիվանդ, հանճարեղ պատանի։

2.Լևոն Շանթը՝ Լևոն Նահաշպետյան- Սեղբոսյանը, հայ գրականության ամենաինքնատիպ գրողներից է, ում գրականությունը մարդու ու մարդկայինի յուրատեսակ դատաստանագիրք է բոլոր նրանց համար, ովքեր ճաշակել են սիրո քաղցր դառնությունը, բաժանման ահավոր ցավը, քննել են հավերժականի ու համամարդկայինի խորհուրդը: Շանթի «Հին աստվածներ» դրաման աննախադեպ հաջողություն ունեցավ՝ դառնալով սևեռուն ուշադրության ու բուռն բանավեճերի առարկա:Պատճառը Շանթի դրամայի խորհրդապաշտական, գաղափարապաշտա
կան գրականությանը պատկանելն էր: Շանթը դրաման համարում է «բանահյուսական ճարտարապետություն» և գտնում է, որ բեմականացումը ընդամենը թերի թարգմանություն է, պետք է կարդալ՝ «բնագիրը գրքին մեջն է»: XX դարասկիզբը աննախադեպ էր հայ գրականության համար: Մեծարենց, Տերյան, վաղ շրջանի Չարենց. այս բանաստեղծները բոլորովին նոր մտածողություն էին բերում՝ խորհրդանիշների միջոցով, որոնք ոչ միայն խոսքի պայմանականության միջոց էին, այլև յուրովի իմաստավորված որևէ առարկա, երևույթ կամ անձ, որը դառնում է գլխավոր գաղափարի իմաստակիրը: Շանթը լավագույնս տեղյակ էր խորհրդապաշտությանը և իր դրամայում դիմել է բազմաթիվ խորհրդանշանների՝ ծով, Քողավոր, Ճերմակավոր, ալենույշներ, միգանուշներ և այլն:
Ճերմակավորը Վանահոր անցյալի մարմնավորումն է, ծովը՝ կյանքի, Կույր վանականը՝ ներքնատեսության, քանի որ վերապրում է իր զգացածը, Քողավորը Սեղան է, սերը, կինը, որոնք մերժված էին անապատականների մոտ, տեսիլքները խռովում են վանականների հոգին, երերում է Վանահոր հավատը: Հին աստվածները ուժի ,գեղեցկության, նախաստեղծ ազատության ու վայելքների, աշխարհիկ կյանքի մարմնավորումն են: Կյանքն իր բոլոր իրավունքներով խուժում է մենաստան. սկսվում է հոգու ու մարմնի , երազայինի ու իրականի, մտքի ու սրտի «իրարամերժությունը», որտեղ հաղթում է ծովը՝ իր գիրկն առնելով Աբեղային: Հեթանոս աստվածները չեն պարտվում, բայց և չենք կարող ասել, որ հաղթում են: Չի հաղթում նաև Վանահայրը,բայց և այլևս անկարող է պայքարել, քանի որ խարխլվել են զգոնության հիմքերը:Մնացյալը՝ մասնակիցը:

3. Հայ գրականության անհաս Արարատի այս սքանչելիքը բյուրեղացման է հասել 1902-ի Աբասթումանի շռայլ աշնանը, երբ անմահ լոռեցին Ջավախքի ծերերից կրկին լսում է ժողովրդական ասքի մանրամասներ և գեղարվեստական կատարելության է հասցնում այս զրույցը՝ փառաբանելով լավ գործի անմահության գաղափարը: Իր բնույթով պատմողական այս պոեմը մեզ տանում է պարսիկ Նադիր շահի արշավանքների ժամանակները. փոքրոգի շահը, չկարողանալով Թաթուլ իշխանին հաղթել կռվի դաշտում, դիմում է նենգության՝ թիրախ ընտրելով Թաթուլի գեղեցկուհի կնոջը՝ անվերապահորեն հավատալով կանացի փառասիրության հաղթանակին, և չի սխալվում: Դաժան մարտը մոտենում է ավարտին, շահը պարտվում է ազնիվ կռվի դաշտում, սակայն հավատում է իր հյուսած որոգայթին: Թմուկ ամրոցում է շահի

աշուղը, ով գիշեր- ցերեկ գովերգում է«ծով աչքերով, ձյունաճերմակ ճակատով, վարդաթերթ շուրթերով» Թմկա տիրուհուն, ում սիրով հարբած՝ Թաթուլն իջնում է կվի դաշտ՝ պաշտպանելու իր հողն ու տունը: Թմկա տիրուհին ամեն ինչ ունի՝ սեր, նվիրում, փառք, հարստություն, բայց շահն ավելին է խոստանում՝

Քու ճակատին թագ է վայել, լինիս շքեղ թագուհի:

Թմկա տիրուհու անդորրը խռովում են՝ **Դավաճան գործի ամոթը խորին**

Եվ արքայական փառքն ու մեծություն…

Ու դարձավ նա լո՛ւռ, դալու՛կ, մտախո՛հ

Ու քունը փախավ սիրուն աչքերից…

Հարբեցնելով հաղթանակած ամուսնուն ու զորքին՝ տիրուհին դավադրաբար բացում է դարպասները: Բայց… ընդամենը մի հանդիպում խարդախ ու վախկոտ շահի հետ, և նա խորապես գիտակցում է իր քստմնելի արարքի ողջ ողբերգությունը; Գեղեցկուհու միտքը խռոված արքայական փառքն ու մեծությունը իրենց տեղը զիջում են դավաճան գործի խորին ամոթին ու անդառնալի զղջմանը: Գեղեցկուհին զգում է իր ասպետորեն ազնիվ ու անպարտելի Թաթուլի և վախկոտ, փոքրոգի, խարդախությամբ անպարտելի բերդը նվաճած չնչին մարդուկի տարբերությունը; Նա խորապես հասկանում է, որ շահի համար ինքը սոսկ միջոց էր ու գործիք՝ բերդին տիրելու, ու արհամարհանքով շահի երեսին է շպրտում դաժան իրականությունը՝

…Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա…

Պարտված տիրուհու համարձակ ու արհամարհական պատասխանը առ ոչինչ է դարձնում դավաճանությամբ նվաճած հաղթանակը, և շահը դառնությամբ խորհում է.

Աշխարհում հաստատ չկա ոչ մի բան,
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին .
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
Ոչ սիրած կնկա տված բաժակին…

Չկա այնքան երազած հաղթանակի բերկրանքը. իր արարքի անդառնալի հետևանքները ճաշակած տիրուհին թունավորում է այն, և շահը նրան արժանի պատիժ է տալիս: Անհաստատ է աշխարհում ամեն ինչ, ավա՛ղ, անգամ սերը:

Եվ հաստատվում է հնուց անտի ճշմարտությունը՝ **Ա՛խ, երանի՝ ո՛վ մարդ կգա**

Ու մարդ կերթա անարատ…

Անարատ՝ իր թողած գործի հիշատակով, իր ապրած անխարդախ կյանքով…

….1916-ին Թիֆլիսում հանդիպում են մեծ լորեցին և մեծ երգահանը՝ պայմանվորվելու «Թմկաբերդի առումը» պոեմի լիբրետոյի համար: Հայտնի է, որ պոեմում տիրուհին անանուն է, բայց օպերայում պետք է անուն ունենա: Բանաստեղծն առաջարկում է Գոհար անվանել, բայց Սպենդիարյանը գտնում է, որ երաժշտության համար ավելի հարմար է Ալմաստը, մանավանդ որ երկուսն էլ թանկարժեք քարեր են:

4.Հայ գրականության անմահ Վարպետի ստեղծագործությունը սնվում է ժողովրդական մտածողության ակունքներից, պարզ ու անբռազբոս պատկերներով նա

բացահայտում է մարդկային հոգու խորքերը՝ դառնալով սիրող սրտերի մտերիմ թարգմանը: Նա գրել է խորունկ ու անկեղծ երգեր, փառաբանել է մաքուր ու անկիրք սերը, ցավով հասկացել, որ«Մաքուր սերը երազ է միայն»: Բանաստեղծը համոզված է, որ «տիեզերքը հոգիանում,և հոգին տիեզերանում է» միայն սիրո առկայությամբ: «Ալագյազի մանիներ» պոեմից մինչև «Հավերժական սեր» հնչում են բանաստեղծի սիրո նվագները. Մարմար Զարոյի անուշ բույրով արբած բանաստեղծը Սինամ հավքի թևով նրան տանում է Ալագյազ՝ այնտեղ մրմնջալու՝**Սրտիս միջին դրախտ ունիմ**

Վարդ ու բլբուլ, սեր ու սազ …

Զարոն նրա պատանեկան սրտի առաջին թրթիռն է, առաջին խլիրտը, ուստի՝

Արևի պես , սիրուն Զարոս,
Շափաղ տալով դուն կուգաս
Ալ վարդերը՝ կրծքիդ վրան,
Լույս ցողերը՝ ոտներիդ,
Հովերի հետ ծամերդ թռան
Մեռնիմ թուր-թուր ունքերիդ:

Ահա այսպես պարզ ու անզարդ նա գովերգում է իր սիրած աղջկան, երբ մեղուն անարգել նստում է Զարոյի լալ-շրթունքին, պատանին խանդակորով նախանձում է մեղվին և բացականրում՝ **Վա՜յ ինձ, ինձեն բյուր- բյուր անգամ՝**

Մեղուն արք ու հարգ ունի…

Սա առաջին անարատ սիրո արձագանքն է, բայց գալիս է իսկական տառապալից սերը՝ Շուշանիկ Մատակյանը, որի նկատմամբ ունեցած պաշտամունքի հասնող սերը դառնում է տառապանք, զայրույթ, զղջում, հիասթափություն(**Էս ճամփեն ոլոր- մոլոր, Տիեզերքի պերճ հյուվածքն եմ,, Միրեցի յարս տարան, Դարդս լացեք, Մաճկալ ես, բեզարած ես, Գիշերն եկավ, զով հովն ընկավ, Մի մրահոն աղջիկ տեսա և այլն**) :

Չարենցը՝ Իսահակյանին

Որքան գնում- այնքան խոնարհ,
Այնքան անհոն և այնքան ջերմ
Ես խոնարհում եմ քո առջև
Եվ սեր, և սիրտ , և քնար:
Արդեն ցնորք է անհնար՝
Ունենալ երգ այդքան նայիվ,
Որ հմայե երեխային
Եվ ծերունու սրտում մնա:

Սիրտդ կարող է վեհանալ,
Որ անսալով նրա սրտին
Երգ ես տվել ժողովրդին
Որ իր երգով անմահանա:
Ախ կուզեի ես ունենալ
Գոնե մի երգ այդքան ջերմին,
Որ գրեի խուղիս որմին-
Եվ նա հավետ այնտեղ մնար:

Եվ սերունդներ այսպես գային,
Եվ կարդային խուղիս որմին
Սրտիս միակ երգը ջերմին
Եվ երգը այդ ես քեզ տայի… 1937,18 X, բանտ:

Գնահատման չափանիշները /11-րդ դասարան/

1-ին հարց 1 ենթահարց՝ 4 մ 2 ենթահարց՝ 1 մ.	**2-րդ հարց** 1 ենթահարց՝ 1 մ. 2 ենթահարց՝ 2 մ. 3 ենթահարց՝ 2 մ.
3-րդ հարց 1 ենթահարց՝ 2 մ. 2 ենթահարց՝ 1 մ. 3 ենթահարց՝ 1 մ. 4 ենթահարց՝ 1 մ.	**4-րդ հարց** 1 ենթահարց՝ 2 մ. 2 ենթահարց՝ 2 մ. 3 ենթահարց՝ 1 մ.